ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԴԴ-ԲԸԱՀ-ԾՁԲ-08/17>>

ք. Երևան

<<13>> փետրվարի 2017թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հակահամաճարակային արշավախումբ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման ընդունման արձանագրությունը ստանալու պահից ինգծորյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **3 600 000** (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 30.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրի պայմանները կիրառվում են 2017 թվականի հունվարի 9-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևով բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	*«Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ*
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 2-րդ նրբ. 42, բն. 7
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02573651
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1150000327850100
ՀՀ.ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՍՊԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Լ. Սահակյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կատարողը պարտավորվում է մատուցել ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ՝ իր բանվորական ուժերով, սարքավորումներով և նյութերով՝ Պատվիրատուի կողմից պահանջվող ժամկետներում:

Ծառայությունները մատուցվում են «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների վարչական շենքերում /ցանկը կցվում է/:

Մատուցվող ծառայություններն են՝

1. Դեզինսեկցիոն ծառայություններ: Պայքար կենցաղային միջատների և կարիճների դեմ քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ Առողջապահության նախարարության կողմից: Ծառայությունը կատարել սպասարկող կազմակերպության բանվորական ուժով և միջոցներով: Ծառայությունը պետք է մատուցվի ամսական 1 անգամ, ստորև ներկայացված մակերեսներին համապատասխան՝ վարչական շենքերում:

2. Դեռատիզացիոն ծառայություններ: Սանիտարական մշակման և հսկանման ծառայություններ՝ /դեռատիզացիայի/ ծառայության մատուցում: Պայքար կրծողների դեմ մեխանիկական եղանակով /թակարդ, վերշա/ և քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ /բրոմոդիալոն տեսակի կամ համարժեք նյութերով/, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ Առողջապահության նախարարության կողմից: Ծառայությունը մատուցել սպասարկող կազմակերպության բանվորական ուժով և միջոցներով: Ծառայությունը պետք է մատուցվի ամսական 1 անգամ, ստորև ներկայացված մակերեսներին համապատասխան՝ վարչական շենքերում:

3. Դեզինֆեկցիոն ծառայություններ: Վարակամիկրոբազերծման ծառայություններ՝ քիմիական ախտահանիչ նյութերով: Ծառայությունը պետք է մատուցվի ամսական 1 անգամ, ստորև ներկայացված մակերեսներին համապատասխան՝ վարչական շենքերում:

4. Ֆումիգացիոն ծառայություններ: Ծխեցման ծառայություններ ամբարային և կենցաղային միջատների դեմ: Քիմիական և մեխանիկական եղանակով՝ օգտագործելով թունաքիմիկատներ, որոնք արգելված չեն: Ծառայությունը մատուցվում է ըստ անհրաժեշտության, պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ց Ա Ն Կ

Հ/Հ	Անվանումը	Մակերեսներ	Հասցեներ
1	«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմին	670	քաղաք Երևան, Թբիլիսյան խճ.3/9
2	ՀՀ դատարանների արխիվ	640	քաղաք Երևան, Արա Մարտիրոսյան 3

3	ՀՀ Վճռաբեկ դատարան	400	քաղաք Երևան, Վ.Սարգսյան 5
4	ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան	100	քաղաք Երևան, Գ. Նժդեհ 23
5	ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	1638	քաղաք Երևան, Գ. Նժդեհ 23
6	Վարչական դատարան	1200	քաղաք Երևան, Գ. Նժդեհ 23
7	Վարչական դատարանի Վեդի քաղաքի վարչական շենք	100	քաղաք Վեդի, Արարատյան 55
8	Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	500	քաղաք Երևան, Մ.Խորենացու 162/ա
9	Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	859	քաղաք Երևան, Տիգրան Մեծի 23/2
10	Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	700	քաղաք Երևան, Նազարբեկյան թ. 40
11	Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	200	քաղաք Երևան, Գյուլիքեխվյան 20
12	Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	580	քաղաք Երևան, Հ.Ներսիսյան 10
13	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան	980	քաղաք Երևան, Վրշակունյաց պ. 24/1
14	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան	400	քաղաք Երևան, Օտյան 53/2
15	**ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան**		
15.1	Աշտարակ քաղաքի վարչական շենք	600	քաղաք Աշտարակ, Էջմիածնի խճուղի 65
15.2	Ապարան քաղաքի վարչական շենք	650	քաղաք Ապարան, Գայի 25
15.3	Թալին քաղաքի վարչական շենք	500	քաղաք Թալին, Ռուսոյան 13
16	**ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան**		
16.1	Արտաշատ քաղաքի վարչական շենք	900	քաղաք Արտաշատ, Շահումյան 19,
16.2	Վեդի քաղաքի վարչական շենք	420	քաղաք Վեդի, Թումանյան փողոց
16.3	Մասիս քաղաքի վարչական շենք	400	քաղաք Մասիս, Հերացի փողոց
16.4	Վայք քաղաքի վարչական շենք	720	քաղաք Վայք, Ջերմուկի խճ. 8

16.5	Եղեգնաձոր քաղաքի վարչական շենք	620	քաղաք Եղեգնաձոր, Միկոյան 23
17	**<< Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան**		
17.1	Էջմիածին քաղաքի վարչական շենք	720	քաղաք Արմավիր, Հանրապետության 41
17.2	Արմավիր քաղաքի վարչական շենք	750	քաղաք Էջմիածին, Կամոյի 15
18	**<< Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան**		
18.1	Գավառ քաղաքի վարչական շենք	400	քաղաք Գավառ, Սայաթյան 18
18.2	Սևան քաղաքի վարչական շենք	500	քաղաք Սևան, Աբովյան 6/1
18.3	Մարտունի քաղաքի վարչական շենք	350	քաղաք Մարտունի, Շահումյան 5.
18.4	Վարդենիս քաղաքի վարչական շենք	480	քաղաք Վարդենիս, Լ. Ազգալդյան 2
18.5	Ճամբարակ քաղաքի վարչական շենք	480	քաղաք Ճամբարակ, Գ.Նժդեհ 99/1
19	**<< Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան**		
19.1	Վանաձոր քաղաքի վարչական շենք	750	քաղաք Վանաձոր, Մխիթար Գոշի 6
19.2	Ալավերդի քաղաքի վարչական շենք	540	քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի 8
19.3	Սպիտակ քաղաքի վարչական շենք	540	քաղաք Սպիտակ, Աչեք Մանուկյան 2 նրբ.10
19.4	Ստեփանավան քաղաքի վարչական շենք	540	քաղաք Ստեփանավան, Տարոն Վարդանի 53
19.5	Տաշիր քաղաքի վարչական շենք	240	քաղաք Տաշիր, Զատուկյան թիվ 19
20	**<< Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան**		
20.1	Հրազդան քաղաքի վարչական շենք	500	քաղաք Հրազդան, Մեկրոշյան 13 փողոց 1/1
20.2	Աբովյան քաղաքի վարչական շենք	500	քաղաք Աբովյան, Կոտայքի 8
20.3	Չարենցավան քաղաքի վարչական շենք	300	քաղաք Չարենցավան, Նրիտասարդական փող. թիվ 2/1
20.4	Եղվարդ քաղաքի վարչական շենք	300	քաղաք Եղվարդ, Չարենցի 29
21	**<< Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան**		
21.1	Գյումրի քաղաքի վարչական շենք	850	քաղաք Գյումրի, Անկախության հրապարակ 7

21.2	Արթիկ քաղաքի վարչական շենք	350	քաղաք Արթիկ, Բաղրամյան 40
21.3	Մարալիկ քաղաքի վարչական շենք	400	քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փող. 198
22	**ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան**		
22.1	Կապան քաղաքի վարչական շենք	550	քաղաք Կապան, Մելիք Ստեփանյան 3/2
22.2	Գորիս քաղաքի վարչական շենք	450	քաղաք Գորիս, Անկախության 4/1
22.3	Սիսիան քաղաքի վարչական շենք	50	քաղաք Սիսիան, Գ. Նժդեհի 6
22.4	Մեղրի քաղաքի վարչական շենք	350	քաղաք Մեղրի, Զորավար Անդրանիկ 24/1
23	**ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան**		
23.1	Իջևան քաղաքի վարչական շենք	300	քաղաք Իջևան, Նալբանդյան 1/1
23.2	Նոյեմբերյան քաղաքի վարչական շենք	400	քաղաք Նոյեմբերյան, Կամոյի 2
23.3	Դիլիջան քաղաքի վարչական շենք	200	քաղաք Դիլիջան, Շահումյան 15
23.4	Բերդ քաղաքի վարչական շենք	270	քաղաք Բերդ, Այգեստան 49ա
Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետն է		Կնքվելիք պայմանագրի գործողությունները տարածվում են 09.01.2017թ. փաստացի ծագած հարաբերությունների վրա և գործելու է մինչև 2017թ. դեկտեմբերի 24-ը ներառյալ:	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊՈԿ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 2-րդ նրբ. 4շ. բն. 7
ՀՎՀՀ՝ 02573651
ՀՀ՝ 1150000327850100
«Հայբ[illegible]» ՍՊԸ

Տնօրեն Ա. Սարգսյան

(ստորագրություն)

Հավելված 2
«13» փետրվարի 2017 թ. կնքված
N «ԴԳ-ԲՇԱՀ-ԾՁԲ-08/17» ծանկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ	10%	10%	35%	35%	35%	60%	60%	60%	100%	100%	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են առոչական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 2-րդ նրբ. 4շ. թն. 7
ՀՎՀՀ՝ 02573651
ՀՀ՝ 11500003378501 00
«Հայբիզնեսբանկ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ա. Սարգսյան

(ստորագրություն)

Հավելված 3
«___» փետրվարի 2016 թ. կնքված
N «ԿԻԲՕՍ-ԴԶՊ-08/17» ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագիր կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հեռ _____	հեռ _____
_____	_____
էլփոստ _____	էլփոստ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱԿԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, որոնք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախաձեռնած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համաձայն շարադրանքը	ըստ այլնանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ այլնանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /տարադրությամբ/	Վճարման ենթակա գումարը /ըստ վճարման տեսակների/
			Մատուցված ծառայությունների բանակական ցուցանիշը		Կատարման տաքնիշը			

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանձնվում են սույն արձանագրության բարկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<< __ >> փետրվարի 2017 թ. կնքված
N <<ԳՀ-ԲԸԱՀ-ԾՁԲ 08/17>> ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----- --- -----ի (այսուհետ՝ Պատվիրատու)
և
(Պատվիրատուի անունը)
---------- ----- ----ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ---- ----- ---
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. --- --- -- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____ _____ _____ _____ __
ազգանուն, անուն

_____ _____ _____ _____ __
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախադրված ներկայացուցիչ՝

_____ _____ _____ _____ __
ազգանուն, անուն

_____ _____ _____ _____
ստորագրություն